

ՊԱՏՃԷՆ.

Տ. Կ.

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ Անհամանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ կաթուղիկոս Ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք Հայաստանեայց նախամեծար աթոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ **Էջմիածնի** գերապատիւ առաջնորդաց Հայոց Ռուսաստանի Հայրապետական օրհնութեամբ ցաւցնում ենք.

Ի հետեւումն մայիսի 10-ի, թ. 549 Մեր կոնդակի՝ տալիս ենք Ձեզ սոյն Հրահանգը, պատուիրելով ծանուցանել Թեմիդ ժողովրդին ու եկեղեցական վարչական հաստատութիւններին ի կատարումն:

ՀՐԱՀԱՆԳ

1. *Առաջիկայ օգոստոսի 15-ին դումարուելու է Ռուսիայի սահմաններում ապրող հայ ժողո-*

վրդի ընտրեալ պատգամաւորների Կեդրոնական Ժողովը։

2. Ռուսահայոց եկեղեցական պատգամաւորական այդ Ժողովը կազմուելու է որոշ ընտրողական շրջանների ժողովրդի ընտրած պատգամաւորներից։

3. Այս պատգամաւորներին ընտրելու համար իւրաքանչիւր ընտրողական շրջանում պատուիրակների ժողով է գումարուելու մինչև յուլիսի 15-ը։ Պատուիրակների ժողովների բացուելու օրը, այլ և ժողովատեղը որոշում է մերձաւոր Հոգևոր իշխանութիւնը՝ պատուիրակների ընտրութիւնը կատարուելուց յետոյ՝ աչքի առաջ ունենալով ժողովրդի յարմարութիւնը. այդ օրուայ և ժողովատեղի մասին վաղօրօք (առնուազն երկու շաբաթ առաջ) պիտի յայտարարէ ժողովրդին լրագրութեամբ, թերթիկներով կամ ծանուցումներով։

4 Պատուիրակների ժողովները կազմուելու են իւրաքանչիւրը համապատասխան ընտրողական շրջանի բոլոր ծխական եկեղեցիների (կամ աղօթատների) ընտրած պատուիրակներից։ Մինչև 1000 հոգի ժողովուրդ ունեցող իւրաքանչիւր եկեղեցի ընտրում է մի պատուիրակ. իսկ 1000-ից աւելի ժողովուրդ ունեցող եկեղեցիները իւրաքանչիւր 1000-ի համար մի մի պատուիրակ են ընտրում (վերջին 1000-ը կարող է լրիւ չլինել, սակայն ոչ պակաս 500-ից)։ Պատուիրակների ժո-

ղովը կանոնաւոր է համարւում, եթէ ներկայ է բոլոր ընտրուած պատուիրակների կէսից աւելին։

5. Պատուիրակների ընտրութեանը պէտք է ձեռնարկել սոյն Հրահանգը ստանալուց անմիջապէս յետոյ։ Ընտրութիւնը կատարելու են ծխական ժողովները, որոնց ընտրելու և ընտրուելու իրաւունքով մասնակցելու իրաւունք ունին նոյն եկեղեցու (կամ աղօթատան) 21 տարին լրացրած բոլոր ծխականները. գումարուելիք ծխական ժողովի մասին եկեղեցու քահանաները պարտաւոր են լրագրութեամբ, թերթիկներով և թէ եկեղեցում բերանացի ծանուցումներ անել։ Առաջին անգամ ժողովը կանոնաւոր է համարւում եթէ ներկայ է իրաւասու ծխականների գոնէ ½ մասը. իսկ երկրորդ անգամ որքան էլ որ լինի ներկայ ժողովականների թիւը։

6. Պատուիրակների իւրաքանչիւր ժողով Կեդրոնական Ժողովին մասնակցելու համար պատգամաւորներ է ընտրում իւր ընտրողական շրջանի հայ ազգաբնակութեան թուի համեմատ։

ծանօթ.—Թէ որոնք են ընտրողական շրջանները, որտեղ են լինելու պատուիրակների ժողովատեղերը և թէ որ շրջանից քանի պատգամաւոր է ընտրուելու՝ ի նկատի ունենալով, որ մօտաւորապէս իւրաքանչիւր 20000 հոգուց մի պատգամաւոր է լինելու՝ այդ մասին տես յօդ. 10։

7. Թէ պատուիրակ, թէ պատգամաւոր կարող են ընտրուել նաև նոյն ծխական եկեղեցուն

կամ ընտրողական շրջանին չպատկանող անձեր։ Իւրաքանչիւր իրաւասու ծխական, պատուիրակ և պատգամաւոր կարող է ունենալ միայն մէկ ձայն։

8. Կեդրոնական Ժողովը, իբրև Ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և տնօրէն, կարող է իւր քննութեանը ենթարկել և որոշումներ տալ Ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ։ Կեդրոնական Ժողովի առաջիկայ նստաշրջանի առաջ դնում ենք իբրև անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրներ՝ դպրոցական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը։

9. Սոյն Հրահանգը գործելու է մինչև Կեդրոնական Ժողովից հաստատուն Կանոնադրութեան մշակումը և վաւերացումը։

10· ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ	ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՏԵՂԻՆԵՐ	ԸՆՏՐԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ
1) Նոr Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմը Ասtրախանի թեմ	Նոր Նախիջևան քաղաք	1.
2) Հիւսիսային Կովկաս, Սեւծովեան շրջան և Դաղստանի Հիւսիսային մասը (Պետրովսկ...)	Վլադիկավկազ	1.
3) Աստրախան քաղաքը և թեմի մնացած մասը։	Աստրախան	1.
Շամախու թեմ		
4) Բաքու, Դերբենդ, Ղուբա քաղաքները շրջակայ գիւղերով ու արուարձաններով, այլև Լենքորանի (Ղար.թ.) ու Ջաւադ գաւառները	Բաքու	2.
5) Շամախու և Գեոկչայի գաւառները։	Շամախի	1.
Ղարաբաղի թեմ		
6) Շուշի քաղաք և գաւառ	Շուշի	4.
7) Ջիւանշիրի գաւառ	Որոշում է մերձաւոր	1.
8) Ջիբրայիլ կամ Կարեագինեան գ.	Հոգևոր իշխանութիւնը	1.
9) Նուխու և Արեշի գաւառները	Նուխի, կամ որոշում է մերձ. հոգ. իշխանութիւնը	2.

Թիֆլիսի թեմ

10) Թիֆլիս քաղաք և գաւառ	Թիֆլիս	4.
11) և 12) Բորչալուի գաւառը մերձ. հոգևոր իշխանութիւնը բաժանելու է երկու մօտաւորապէս հաւասար ընտրողական շրջանի, իւրաքանչիւրին մի մի ձայն յատկացնելով և որոշելով պատուիրակների ժողովների տեղերը։		2.
13) և 14) Գորու, Դուշէթի, Թիոնէթի, Թելաւի և Սղնախի գաւառները ու Զաքաթալի շրջանը մերձաւոր հոգ. իշխանութիւնը բաժանելու է 2 մօտաւորապէս հաւասարընտրողական շրջանների՝ յատկացնելով իւրաքանչիւրին մի մի ձայն և որոշելով պատուիրակների ժողովատեղին։		2.
15) Ախալցխա քաղ. և գաւառ.	Ախալցխա	1.
16) Ախալքալաք քաղ. և գաւառ.	Ախալքալաք	3.
17) Բաթումի, Արդուինի և Սուխումի շրջանները և Քութայիսի նահանգ	Բաթում	1.
18) Գանձակ քաղ. և գաւառ	Գանձակ	2.
19) Ղազախ քաղ. և գաւառ	Որոշում է հոգ. իշխանութիւնը	2.

Երեւանի թեմ

20) Երևան քաղ. և գաւառ.	Երևան	3.
21) Ալեքսանդրապոլ քաղ. և գաւառ.	Ալեքսանդրապոլ	7.
22) Հ. Նախիջևան քաղ. և գաւառ.	Հին Նախիջևան	2.
23) Շարուր—Դարալագեազ գաւառ	Որոշում է հոգ. իշխանութիւնը	1.
24) Նոր Բայազէդ քաղ. և գաւառ.	Նոր Բայազէդ	4.
25) Սուրմալու գաւառ.	Իգդիր	1.
26) Էջմիածնի գաւառ.	Վաղարշապատ	4.
27) Կարս քաղ. և նահանգը հոգ. իշխանութիւնը բաժանում է ընտրողական շրջանների, որոշում է պատուիրակների ժողովների տեղը և բաշխում ընտրելի 4 պատգամաւորների ընդհանուր թիւը համեմատ իւրաքանչիւր ընտրողական շրջանի հայ ժողովրդի թուի։		4.
28) Զագաձոր կամ Զանգեզուրի գաւառ.	Որոշում է մերձ. հոգևոր իշխանութիւնը	3.

Ընդամէնը վաթսուն պատգամաւոր

Իսկականի վրայ Նորին Վեհափառութեան սեպհական ձեռքով ստորագրուած է

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

7 Յունիսի 1906 թ.
Ըստ Տոմարիս ՌՑԽԵ.
Մեր Հայրապետութեան ԺԳ-րդ տարին
Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում
Վաղարշապատ
Թ. 693.